ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/4» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

- Վայրը՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 224/2 սենյակ
- Օրը՝ 22.11.2017թ.
- Ժամը՝ 09:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ե.Խաչիբաբյան

Հանձնաժողովի անդամներ՝ Տ.Իգիթյան

Ա.Մինասյան

Գ.Մարտիրոսյան

Է.Ղազարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Վարդանյան

1. Մրցույթին մասնակցելու հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Հ/Հ	Մասնակցի		
	անվանումը	ՀՎՀՀ	հայտը ներկայացնելու օրը, ժամը
1	«ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ	02614085	21.11.2017
2	«Ֆլեշ» ՍՊԸ	01808789	21.11.2017

Ընդունել որոշում՝ կողմ- 5 դեմ-0

2. Մասնակիցների գնային առաջարկները՝

Հ/Հ	Չափաբաժնի անվանումը	«ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ	«Ֆլեշ» ՍՊԸ
		ԱԱՀ-ով	ԱԱՀ-ով
1	***Բենզին ռեգուլյար***	213244600	230079700
2	***Բենզին պրեմիում***	163695870	180485190

Ընդունել որոշում՝ կողմ- 5 դեմ-0

3. Մասնակիցների կողմից ներկայացված յուրաքանչյուր բացված հայտում պահանջվող փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պայմաններին համապատասխան, բացառությամբ «Ֆլեշ» ՍՊԸ-ի (հայտի ապահովման գումարը պակաս է գնային առաջարկի 5 տոկոսից): Գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Ֆլեշ» ՍՊԸ-ի հայտը:

Ընդունել որոշում՝ կողմ-5 դեմ-0

4. Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համապատասխան կայքերում կատարվել են որոնողական աշխատանքներ և պարզվել որ սույն ընթացակարգի մասնակիցները չեն գտնվում Եվրասիական տնտեսական միությանն անդամակցող երկրներում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակներում:

Ընդունել որոշում՝ կողմ-5 դեմ-0

5. Գնահատող հանձնաժողովը որոշեց armeps.am/epps համակարգով վերջացնել գնահատումը, որից գնահատման հաշվետվության (Evaluation) բեռնումից հետո միայն 1-ին և 2-րդ տեղ զբաղեցրած մասնակիցների մասով ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն մասնակիցների տվյալների ճշտման մասին հարցում կատարել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, ինչպես նաև նույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն ծանուցում ուղարկել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունել որոշում՝ կողմ- 5 դեմ-0